ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀԶՀ-ՊԸԾՁԲ-16/2 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Քաղ. Երևան «09» օգոստոսի 2016թ.

2016թ-ի օգոստոսի 09-ին՝ ժամը 12:00-ին, Հայաստանի զարգացման հիմնադրամի գրասենյակում՝ ՀՀ, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 հասցեում, տեղի ունեցավ ՀԶՀ-ՊԸԾՁԲ-16/2 ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

Վիտալի	Սաղաթելյան	Հայաստանի զարգացման հիմնադրամի արտահանողների աջակցության բաժնի մասնագետ – բաժնի ղեկավար.
Անահիտ	Մկրտչյան	Հայաստանի զարգացման հիմնադրամի արտահանման զարգացման և խթանման բաժնի մասնագետի ժ/պ.

Հանձնաժողովի նիստին ներկա էր՝

Տիրան	Լաճիկյանը	Հայաստանի զարգացման հիմնադրամի գործերի կառավարման բաժնի գլխավոր իրավաբան – բաժնի ղեկավար:

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի երկու անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Վիտալի Սաղաթելյանը, իսկ քարտուղարն էր՝ Տիրան Լաճիկյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀՋՀ-ՊԸԾՁԲ-16/2 ծածկագրով պարզեցված ընթացակարգին մասնակցելու հայտ ներկայացրած անձի և վերջինիս կողմից ներկայացված հայտի գնահատման մասին:
2. Մասնակցի կողմից առաջարկված գնի (գների), առաջին տեղ զբաղեցրած մասնակից որոշելու մասին:
3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա և ժամի մասին:

1. ՀՋՀ-ՊԸԾՁԲ-16/2 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԻ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահ Վիտալի Սաղաթելյանը նշեց, որ գնման առարկայի 1-ին չափաբաժնի ընդհանուր (նախահաշվային) գինը կազմում է 12 500 000 ՀՀ դրամ:

Հանձնաժողովի քարտուղար Տիրան Լաճիկյանը հայտնեց, որ՝

- ՀՋՀ-ՊԸԾՁԲ-16/2 ծածկագրով պարզեցված ընթացակարգին մասնակցելու հայտ է ներկայացրել հետևյալ անձը (այսուհետ՝ նաև մասնակից).

Հ/հ	Մասնակցի անվանում	Մասնակցի գտնվելու վայրը
1.	«ՄԵՐԻԴԻԱՆ ՀՈԼԴԻՆԳ» ՓԲԸ	ՀՀ, ք. Երևան, Ոսկերիչների փողոց հ1

Հանձնաժողովն արձանագրեց, որ՝

- մասնակիցը հայտը պարունակող ծրարը կազմել և ներկայացրել է ՀՋՀ-ՊԸԾՁԲ-16/2 ծածկագրով պարզեցված ընթացակարգի (այսուհետ՝ ընթացակարգ) հրավերի (այսուհետ՝ հրավեր) պահանջներին համապատասխան,
- մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը,
- մասնակցի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին,

Որոշվեց՝

1. Վիտալի Սաղաթելյանի և Տիրան Լաճիկյանի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն.
2. «ՄԵՐԻԴԻԱՆ ՀՈԼԴԻՆԳ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար:

Կողմ՝ 2
Դեմ՝ 0

2. ՄԱՍՆԱԿՑԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԳՆԻ (ԵՐԻ), ԱՌԱՋԻՆ ՏԵՂ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Հանձնաժողովն արձանագրեց, որ մասնակիցը ներկայացրել է հետևյալ գները՝ առանց ԱԱՀ.

Չափա-բաժնի համարը	Ծառայության անվանումը	Մասնակցի անվանումը և առաջարկած գինը (ՀՀ դրամ)
		«ՄԵՐԻԴԻԱՆ ՀՈԼԴԻՆԳ» ՓԲԸ
1.	Դիզայնավորման և կահավորման ծառայություն	11 000 000

Որոշվեց՝

1. Որպես ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ՄԵՐԻԴԻԱՆ ՀՈԼԴԻՆԳ» ՓԲԸ-ին:

Կողմ՝ 2
Դեմ՝ 0

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա և ժամի մասին:

Որոշվեց՝

Հանձնաժողովի հաջորդ նիստը անցկացնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 49-րդ կետով սահմանված փաստաթղթերը հանձնաժողովի քարտուղարի կողմից հանձնաժողովի անդամներին տրամադրվելու օրվան հաջորդող աշխատանքային օրը՝ ժամը 12:00-ին:

Կողմ՝ 2
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Վ. Սաղաթելյան _____

Հանձնաժողովի անդամ՝

Ա. Մկրտչյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Տ. Լաճիկյան _____